# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /2-րդ/

**«ԱՍ- Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի, Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Մ. Բաղրամյան փողոցի 104 հասցեում նոր միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

22.11.2024թ. Արագածավան բնակավայր

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը,
- Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Թադևոսյանը, Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար Ա. Նազարյանը,
- «ԱՍ- Նախագիծ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Սարգսյանը,
- ՀՏԶՀ ներկայացուցիչ Ռ. Վարդանյանը և համայնքի բնակիչներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2024թ. նոյեմբերի 22-ին ժամը 14:00-ին Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի, Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Մ. Բաղրամյան փողոցի 104 հասցեում նոր միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ծրագիրը իրականացվում է 300 դպրոցների կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ՀՀ կառավարության ծրագրի շրջանակներում:

Արագածավան բնակավայրում նախատեսվում է կառուցել նոր միջնակարգ դպրոցի 432 աշակերտի համար, ինչպես նաև՝ բացօթյա մարզադաշտ և վազքուղի:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ

ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն փորձաքննական կենտրոնին ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Այնուհետև, փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Ելույթներ ունեցան նաև ՀՏԶՀ ներկայացուցիչ Ռ. Վարդանյանը և «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Սարգսյանը,

Հանրային լսման մասնակիցների կողմից եղան հարցադրումներ, որոնց վերաբերյալ տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեություն:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ լսման մասնակիցները որոշեցին հավանություն տալ «ԱՍ- Նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Արագածոտնի մարզի, Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Մ. Բաղրամյան փողոցի 104 հասցեում նոր միջնակարգ դպրոցի կառուցմանը:

Հանրային լսումը ամբողջությամբ տեսաձայնագրվել է:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

« ԱՍ- Նախագիծ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Սարգսյանը